Հավելված 1
«22» նոյեմբերի 2016թ. կնքված
N ԱԳՆ-ՇՀԾՁԲ-16/6-49 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր
Տեխնիկական բնութագիր ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ դիվանատիգական ներկայացուցչությունների պաշտոնական կայքերի լրամշակման աշխատանքները պետք է տարվեն գոյություն ունեցող կայքերի ծրագրային կոդի վրա և պետք է պահպանվեն բովանդակության կառավարման համակարգերի բոլոր գործառույթները: Լրամշակման աշխատանքները ներառում են ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքի, ինչպես նաև բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունների կայքերի թարմացված դիզայնը, որը համապատասխան կլինի ժամանակակից լուծումներին, կլինի ադապտացված նաև բջջային սարքավորումների վրա աշխատելու համար: Լրամշակված կայքերը ամբողջովին պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 26 դեկտեմբերի 2013 թվականի N 1521-Ն «ԻՆՏԵՐՆԵՏ ՑԱՆՑՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման դրույթներին: Կատարված փոփոխությունների և հավելումների արդյունքում ներկայիս կայքի բովանդակությունը պետք է ամբողջովին պահպանվի: Բացի արտաքին տեսքի փոփոխություններից, ԱԳՆ պաշտոնական կայքում պետք է կատարվեն հետևյալ լրամշակումները՝ **Տեխնիկական/ծրագրային լրամշակումներ** 1. Կայքերը սպասակող սերվերների օպերացիոն համակարգերի և կիրառվող ծրագրաշարի թարմացում մինչև գործող վերջին տարբերակները: 2. Առկա կայքերի ծրագրայի կոդի վերափոխում նախկին PHP (ՓիԷյջՓի) 5.3 փոխարեն PHP (ՓիԷյջՓի)7 տարբերակով աշխատելու համար: 3. MySQL (ՄայԷսՔյուԷլ) տվյալների հիմնապաշարի 5.7 տարբերակի կիրառում: 4. SSL (ԷսԷսԷլ) սերտիֆիկատի տեղադրում բոլոր կայքերի և բովանդակության կառավարման համակարգերի համար **Կայքերի արտաքին տեսքին և դիմային հատվածին վերաբերող գործառութների փոփոխություններ և հավելումներ** 1. ԱԳՆ պաշտոնական կայքի, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների կայքերի հիմնական և ներքին էջերի արտաքին տեսքի լրամշակում և նոր դիզայնի տրամադրում՝ պատվիրատուի կողմից տրված առաջարկների հիման վրա: 2. ԱԳՆ պաշտոնական կայքի գլխավոր էջի սլայդերի համար առավել մեծ տարածքի նախատեսում՝ մեկ ստատիկ նկարով և հինգ լուրով: 3. ԱԳՆ պաշտոնական կայքի լրատվական հատվածում ընդլայնված որոնման գործառույթի մշակում, որը հնարավորություն կտա որոնել ըստ պատկանելիության, երկրի, տարեթվի, ժամանակահատվածի կամ/և հիմնահարցի:

4. ԱԳՆ պաշտոնական կայքի մամուլի հաղորդագրություններ բաժնում օրացույցի գործառույթների լրամշակում, որը հնարավորություն կտա օրացույցի վրա անմիջապես ընտրել փնտրվող նյութի օրը, ամիսը և տարեթիվը և տեսնել նշված օրվան պատկանող բոլոր մամուլի հաղորդագրությունները:

5. ԱԳՆ պաշտոնական կայքի գլխավոր էջում զետեղված լրահոսի գործառույթների փոփոխություն, որը հնարավորություն կտա լրահոսն ընտրելու դեպքում ցուցադրել կայքի «Տեղեկատվություն» բաժնում առկա բոլոր բաժինների տեղեկատվությունը՝ ըստ ժամանակագրության:

6. ԱԳՆ և դիվանագիտական ներկայացուցչությունների կայքէջերում սոցիալական մեդիայի այն հարթակների պատկերանշանների տեղադրում, որտեղ ներկայացված է նախարարությունը կամ տվյալ դիվանագիտական ներկայացուցչությունը:

7. Դիվանագիտական ներկայացուցչությունների կայքերում համապատասխան նյութը սոցիալական հարթակներում տարածելու գործառույթի տրամադրում:

8. ԱԳՆ պաշտոնական կայքում թվիթերյան էջի գրառումների պատուհանի նախատեսում:

9. ԱԳՆ և դիվանագիտական ներկայացուցչությունների կայքերում ընտրված նյութը տպելիս ամբողջ կայքի/էջի փոխարեն միայն տվյալ տեքստային պարունակությունը տպելու հնարավորության տրամադրում:

10. ԱԳՆ պաշտոնական կայքում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների տեղեկատվության էջում յուրաքանչյուր ներկայացուցչության համար առկա սոցիալական մեդիայի հարթակների տարբերանշանների և դեպի տվյալ հարթակ հղման ավելացման հնարավորություն:

11. ԱԳՆ պաշտոնական կայքի «Տեղեկատվություն» բաժնում «Հայտարարություններ» ենթաբաժնի մշակում, ինչպես նաև ընտրված հայրարարություններն առանձին պատուհանով կայքի գլխավոր էջում ցուցադրելու հնարավորություն, որը թույլ կտա հատուկ դիզայնի մշակման շնորհիվ կարևոր հայտարարություններն ավելի տեսանելի դարձնել կայքի այցելուներին:

12. ԱԳՆ պաշտոնական կայքում նախարարի այցերի, մամուլի ասուլիսների մասին հայտարարություններ (անոնսներ) տեղադրելու, հավատարմագրման տեխնիկական մանրամասներ հրապարակելու, ինչպես նաև անմիջապես կայքով հավատարմագրվելու հնարավորության տրամադրում: Հավատարմագրման հայտն անմիջապես պետք է ուղարկել հատուկ նախատեսված էլ. փոստի հասցեին:

13. Համաձայն ՀՀ Կառավարության 14 նոյեմբերի 2013 թվականի N 1325-Ն որոշման՝ ԱԳՆ պաշտոնական կայքի միջոցով անմիջական հարցում/դիմում ուղարկելու հնարավորության ապահովում, որը կներառի նաև էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ հարցում/դիմում ուղարկելու գործառույթը: Բոլոր հարցում/դիմումներն անմիջապես պետք է մուտքագրվեն է ԱԳՆ ներքին փաստաթղթաշրջանառության համակարգ:

14. ԱԳՆ պաշտոնական կայքում ըստ երկրների ինտերակտիվ քարտեզի ստեղծման հնարավորություն, որը թույլ կտա ցանկացած երկիր ընտրելիս տեսնել «երկկողմ հարաբերություններ» բաժում տվյալ երկրի մասին զետեղված տեղեկատվությունը, ներառյալ՝տվյալերկրի և այդ երկրից Հայաստան այցերի մասին հաղորդագրությունները և տվյալ երկրին վերաբերող նորությունները:

15. ԱԳՆպաշտոնական կայքում առկա նախարարության կառուցվածքում փոխնախարարների կողմից համակարգվող վարչությունների ներառման հնարավորություն՝ համապատասխան բաժանմամբ և հիպերլինկերով:

16. ԱԳՆ պաշտոնական կայքում ԱԳ նախկին նախարարների կենսագրություններն ավելացնելու հնարավորության տրամադրում:

17. ԱԳՆ պաշտոնական կայքի «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ» բաժնում ներկայացուցչությունների ցանկը նաև ըստ տարածաշրջանի ցուցադրելու հնարավորության տրամադրում:

18. ԱԳՆ պաշտոնական կայքում թույլ տեսողություն ունեցող անձանց համար կայքի տեքստերի տարատեսակի չափերի փոփոխության հնարավորության տրամադրում:

19. ԱԳՆ պաշտոնական կայքում գրադարան ավելացնելու գործառույթների մշակում:

20. ԱԳՆ պաշտոնական կայքի գլխավոր էջում իրադրային պատուհանների ավելացման հնարավորության տրամադրում:

21. ԱԳՆ պաշտոնական կայք տեղեկատվության տեղադրումից հետո կայքում տվյալ տեղեկատվության ցուցադրման ժամանակի կրճատում:

Կայքի բովանդակության կառավարման համակարգին վերաբերող գործառույթների փոփոխություններ և հավելումներ

22. ԱԳՆ պաշտոնական կայքի, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների կայքերի բովանդակության կառավարման համակարգում համապատասխան գործառույթի մշակում, որը հնարավորություն կտա ընտրել և տեղադրել նշված սոցիալական հարթակի պատկերանշանը ԱԳՆ պաշտոնական կայքում կամ ցանկացած դիվանագիտական ներկայացուցչության կայքում:

23. ԱԳՆ պաշտոնական կայքի, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների կայքերի բովանդակության կառավարման համակարգում նյութերին Open graph (Օփեն գրաֆ) պրոտոկոլի պարամետրեր կցելու հնարավորության տրամադրում: Վերոհիշյալ պարամետրերը ներառում են վերնագիրը, նկարը և նկարագրությունը:

24. ԱԳՆ պաշտոնական կայքի գլխավոր էջում զետեղված լրահոսում առկա հաղորդագրությունների, ինչպես նաև սլայդերի նկարների հերթականությունը բովանդակության կառավարման համակարգից որոշելու և փոփոխելու հնարավորության ապահովում:

25. ԱԳՆ պաշտոնական կայքի «Տեղեկատվություն» բաժնում որևէ նյութ տեղադրելիս կայքին բաժանորդագրված էլ.հասցեներին տվյալ նյութը տարածելու կամ չտարածելու ընտրության հնարավորություն կայքի բովանդակության կառավարման համակարգից: Բաժանորդագրությունը պետք է կատարել Mailchimp (մեյլչիմփ) կամ այլ նմանատիպ համակարգի միջոցով:

26. ԱԳՆ պաշտոնական կայքի բովանդակության կառավարման համակարգում համապատասխան գործառույթի մշակում, որը հնարավորություն կտա դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությանը վերաբերող հաղորդագրությունների անմիջական տեղադրումը /հատուկ նշման դեպքում/ նաև նշված դիվանագիտական ներկայացուցչության բովանդակության կառավարման համակարգում և կայքում, որն այցելելու դեպքում կցուցադրվի տվյալ դիվանագիտական ներկայացուցչության կայքէջը՝ ԱԳՆ կայքէջի փոխարեն:

27. ԱԳՆ պաշտոնական կայքի «Տեղեկատվություն» բաժնում տեղադրվող նյութերի համար բովանդակության կառավարման համակարգում tag (թեգ) դաշտի ավելացում, որտեղ

կնշվեն տվյալ տեղեկատվությունում արծարծվող խնդիրները և երկրները, ինչն առավել կհեշտացնի կայքի «Որոնում» դաշտի միջոցով տեղեկատվության որոնումը: 28. ԱԳՆ պաշտոնական կայքի բովանդակության կառավարման համակարգից տեսանյութերի տեղադրում YouTube (Յություբ) համակարգի հետ ինտեգրացիայի միջոցով: 9 Դիմող կազմակերպությունների նկատմամբ հավելյալ պայմաններ՝ - Նմանատիպ ծավալի և բարդության պետական մարմինների համար վեբ կայքերի ստեղծման փորձ Էլեկտրոնային ստորագրության օգտագործմամբ/ինտեգրացմամբ վեբ կայքերի կամ համակարգերի նախագծման փորձ	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	01.04.2017թ

* Կատարողը ծառայությունները մատուցում է պատվիրատուի կողմից նշված հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան 0010, ք.Երևան Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02527728
Հ/Հ90001196095
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Ծ.Ավետյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Հելիքս Կոնսալտինգ ՍՊԸ
ք. Երևան, Ն. Ադոնցի 2, «Երազ»
բիզնես կենտրոն
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220000129423000
ՀՎՀՀ 00031518
էլ. հասցեն՝ info@helix.am
Հեռ. (060)508287
Ա. Մխիթարյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
«22» նոյեմբերի 2016թ. կնքված
N ԱԳՆ-ՇՀԾՁԲ-16/6-49 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ ԱԳՆ-ի և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների պաշտոնական կայքում ծրագրային փոփոխությունների իրականացման ծառայություններ												6000000	6000000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան 0010, ք.Երևան Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02527728
Հ/Հ90001196095
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գ.Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Հելիքս Կոնսալտինգ ՍՊԸ
ք. Երևան, Ն. Ադոնցի 2, «Երազ»
բիզնես կենտրոն
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220000129423000
ՀՎՀՀ 00031518
էլ. հասցեն՝ info@helix.am
Հեռ. (060)508287
Ա. Մխիթարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«22» նոյեմբերի 2016թ. կնքված
N ԱԳՆ-ՇՀԾՁԲ-16/6-49 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2016թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2016թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2016թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«22» նոյեմբերի 2016թ. կնքված
N ԱԳՆ-ՇՀԾՁԲ-16/6-49 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2016թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2016թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն